

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի, Միքայել Մելքունյանի, Ստեփան Մարգարյանի և Վահե Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-311-05.08.2013-ՍՀ-010/0*) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվող՝ նվազագույն աշխատավարձի բարձրացումը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությանը: Ավելին, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նախատեսվում է նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում հասցնելով մինչև 70 հազ. դրամի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 740-Ն որոշմամբ նախատեսվում է նվազագույն աշխատավարձը 2014 թվականին սահմանել 50000 դրամ, 2015 թվականին՝ 55000 դրամ և 2016 թվականին՝ 62500 դրամ:

Դրա հետ մեկտեղ հարկ է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի իրական հնարավորությունները և ծրագրի իրականաց-

ման փուլայնությունը: Այդ տեսակետից օրենքի նախագծով առաջարկվող նվազագույն ամսական աշխատավարձը 2014 թվականի հունվարի 1-ից 75.0 հազ. դրամ (աճը կազմում է շուրջ 67 տոկոս) սահմանելու դեպքում այն Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով նախատեսված և Հայաստանի Հանրապետության 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ամրագրված աշխատավարձերի բարձրացման քաղաքականությանը համապատասխան կիրարկելու դեպքում արդեն 2014 թվականին կհանգեցնի մոտավորապես 177.0 մլրդ դրամ լրացուցիչ ծախսերի անհրաժեշտության, ինչն իրատեսական չէ:

Բացի դրանից՝ առաջարկվող նվազագույն ամսական աշխատավարձի աճի նման բարձր տեմպերը կգերազանցեն տնտեսության հնարավոր առավելագույն արտադրողականության աճի և գնաճի գումարային տեմպերին (8-10 տոկոս), որի դեպքում կարող է կտրուկ բարձրանալ գործազրկության մակարդակը՝ հատկապես արտադրողականության ցածր մակարդակ ունեցող տնտեսության ճյուղերում, կամ կբարձրանա աշխատողների չգրանցման դեպքերի թիվը: Արտադրողականության համեմատ աշխատավարձերի ավելի բարձր տեմպերով աճը կհանգեցնի գնաճի ավելացման, ինչը ոչ միայն համահունչ չի լինի, այլ նաև խոչընդոտ կհանդիսանա միջնաժամկետ հատվածում 5-7 տոկոս տնտեսական աճի ապահովման համար:

Նվազագույն աշխատավարձերի՝ առաջարկվող տեմպերով բարձրացման ազդեցությունը կփոխանցվի գների վրա՝ ինչպես համախառն պահանջարկի աճի և միավոր աշխատուժի ծախսերի ավելացման արդյունքում, ինչը կպայմանավորվի հարկաբյուջետային խիստ ընդլայնող ազդակով (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման նշված գնահատականների պայմաններում), այնպես էլ՝ դրամի փոխարժեքի արժեզրկման միջոցով (դրամի քանակը տնտեսությունում կավելանա): Բյուջետային ծախսերի կտրուկ ավելացման արդյունքում կաճեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պակասուրդը և պետական պարտքը, որը կարող է հանգեցնել ֆիսկալ անկայնության: Այս երկու գործոնների ընդհանուր ազդեցությամբ կարող է առաջանալ տարեկան 6-7 տոկոս լրացուցիչ գնաճ, որը կարող է շարունակական բնույթ կրել նաև 2015 թվականի ընթացքում: Սպասվում է, որ 2014 թվականի առաջին կեսին դեռևս պահպանվելու է բարձր գնաճը՝ պայմանավորված գազի և էլկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ, և տնտեսական աճի վրա բացասական ազդեցությունը կարող է ավելի բարձր լինել:

Դրամավարկային գործիքների միջոցով նման բարձր և երկարաժամկետ բնույթի գնաճի չեզոքացումը հնարավոր չի լինի, իսկ եթե նույնիսկ հնարավոր լինի, ապա դա կարող է իրականացվել միայն տնտեսության կրճատման հաշվին: Այս առումով հարկ է նշել, որ նվազագույն աշխատավարձի բարձրացման հետևանքով եկամտային հարկի գծով առաջացող լրացուցիչ հարկային բեռը հիմնականում կընկնի փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների վրա:

Օրենքի նախագծի հիմնավորման մեջ ներկայացված նվազագույն և միջին աշխատավարձերի մակարդակների համահունչ լինելու վերաբերյալ դրույթի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ, ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների, 2013 թվականի հունվար-հունիս ամիսների *միջին ամսական աշխատավարձը* նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 2.7 տոկոսով, իսկ 2013 թվականի հուլիսի 1-ից *նվազագույն ամսական աշխատավարձի* աճը կազմել է 28.6 տոկոս: Սահմանված նվազագույն աշխատավարձի մեծությունը չի ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկերը, ուստի, համադրելի չէ պաշտոնապես հրապարակված միջին ամսական աշխատավարձի մեծության հետ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձը միջին աշխատավարձին համադրելիության բերելուց հետո 2013 թվականի հունվար-հունիս ամիսների տվյալներով կազմում է միջին աշխատավարձի 39 տոկոսը, ինչը համահունչ է միջազգային նորմերով սահմանված 40 տոկոս հարաբերակցությանը:

Նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն նաև համայնքների բյուջեների վրա, մասնավորապես, ավելացնելով համայնքների բյուջեներից կատարվող ծախսերը: Որպես հետևանք չի կարելի բացառել ինչպես դրանով պայմանավորված համայնքների բյուջեներում ֆինանսական ճեղքվածքի առաջացումը, այնպես էլ դրանից խուսափելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա կազմակերպությունների աշխատողների թվի անհարկի կրճատումները:

Հայտնում ենք նաև, որ նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացման աճին զուգընթաց, պետական ծառայողների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես համարում է կարևորագույն նախապայման՝ երկրում իրականացվող բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման արդյունավետության բարձրացման առումով: Աշխատավարձերի համաչափ, հետևողական և նպատակադրված աճի այսպիսի ծրագիրը հնարավորություն կտա 2013-2017 թվականների ընթացքում հավասարակշռել 2 կարևոր երևույթ՝

1) մի կողմից կանխել ցածր վարձատրվող աշխատուժի վերացումը կամ ստվեր մղումը՝ տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն ընձեռելով աստիճանաբար վերակառուցել իրենց բիզնեսը, աշխատավարձի աճին զուգահեռ արտադրողականությունը բարձրացնելու շնորհիվ պահպանել առկա զբաղվածության մակարդակը.

2) մյուս կողմից, 2014-2017 թվականների ընթացքում հասնել նվազագույն աշխատավարձի կարևորագույն սոցիալական թիրախների: Մասնավորապես, ծրագրվում է, որ՝

ա. 2014 թվականին արդեն նվազագույն աշխատավարձի մակարդակը կգերազանցի աղքատության վերին շեմը,

բ. աշխատավարձերի հավասարաչափ բաշխման միջազգային պրակտիկայում կիրառվող չափանիշի տեսանկյունից՝ 2014 թվականին նվազագույն աշխատավարձը գերազանցի Հայաստանի մեղիան աշխատավարձի 2/3-ի շեմը,

գ. 2016 թվականին կունենանք նվազագույն աշխատավարձի առավել բարձր մակարդակ, քան նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն է,

դ. 2017 թվականին նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերությունը հասցնել ցանկալի համարվող 40 տոկոս ցուցանիշի:

Ի լրումն նվազագույն աշխատավարձի քաղաքականությանը՝ աշխատավարձերի բարձրացումը և զուգընթաց իրականացվող իրավական դաշտի համապատասխանեցումը նոր իրողություններին, հնարավորություն կընձեռեն արձանագրել լուրջ առաջընթաց աշխատավարձերի կարգավորման ոլորտում և հասնել հետևյալ նպատակադրումներին՝

1) պետական ծառայության տարբեր ոլորտներում աշխատավարձերի սանդղակների համադրելիության սկզբունքի կիրառմանը.

2) պետական և մասնավոր հատվածների աշխատավարձերի հնարավորինս մոտեցմանը՝ համանման մասնագետների համար.

3) պետական ծառայության տարբեր աստիճանների և բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերի միջև համակարգված հարաբերակցությունների սահմանմանը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը ՀՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծրագրով նախատեսված ցուցանիշների համեմատ հանգեցնում է ՀՀ պետական բյուջեի ելքերի (ծախսերի) ավելացման մոտ 177.0 մլրդ դրամի չափով և մուտքերի (եկամուտների) ավելացման 50-51 մլրդ. դրամի չափով (որից շուրջ 43.0 մլրդ. դրամը պետական ծառայողների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի մասով, իսկ 7-8 մլրդ. դրամը մասնավոր հատվածում աշխատող վարձու աշխատողների աշխատավարձերի մասով):

Միաժամանակ նշենք, որ վերոնշյալ գնահատականներում հաշվի չեն առնվել նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման հետևանքով հնարավոր տնտեսական աճի և գնաճի արդյունքում պետական բյուջե հավաքագրվող լրացուցիչ հարկային եկամուտների ցուցանիշները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը որոշակի դրական ազդեցություն կունենա առողջապահության բնագավառի վրա՝ բնակչության սակավ ապահովված սոցիալական խմբերի կողմից բժշկական ծառայություններից օգտվելու հասանելիության աստիճանի բարձրացման, ինչպես նաև անհրաժեշտ թանկարժեք դեղամիջոցների ձեռքբերման հնարավորության ընձեռման առումով:

Բացի դրանից, հաշվի առնելով առողջապահության ոլորտի կրտսեր և միջին բուժաշխատողների աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը, օրենքի նախագծի ընդունմամբ այն զգալիորեն կբարձրանա, նպաստելով վերջիններիս կողմից իրենց աշխատանքային պարտականությունների որակյալ կատարմանը:

Միաժամանակ, օրենքի նախագծի ընդունմամբ՝ առողջապահության ոլորտի ֆինանսավորման առումով կպահանջվի ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացում շուրջ 2,3 մլրդ. դրամի չափով:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին
ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **բացասական ազդեցություն**:

Նախագծով նախատեսվող նվազագույն աշխատավարձի բարձրացումը տնտեսվարող սուբյեկտների համար կավելացնի աշխատավարձերի վճարման հետ կապված ծախսերը և կարող է հանգեցնել չձևակերպված աշխատողների թվաքանակի ավելացմանն ու ստվերային տնտեսության աճին: Միևնույն ժամանակ, աշխատավարձի փոփոխությունը պետք է պայմանավորված լինի շուկայական հարաբերություններով և կարգավորվի ազատ շուկայական պայմաններում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագծի) ընդունմամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանել՝ 75 000 ՀՀ դրամ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) **նազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն բացասական ազդեցություն,**

բ) **շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ դրական ազդեցություն:**

ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
կարգավորման**

1. <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

ակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պ-311-05.08.2013-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «45000 դրամ» բառերը փոխարինել «75000 դրամ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝

- 1) երկրորդ պարբերության «270 դրամ» բառերը փոխարինել «450 դրամ» բառերով.
- 2) երրորդ պարբերության «300 դրամ» բառերը փոխարինել «500 դրամ» բառերով.
- 3) չորրորդ պարբերության «450 դրամ» բառերը փոխարինել «750 դրամ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ներկայացվող փոփոխությունների ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության բնակչության օրեցօր վատթարացող սոցիալական վիճակի, ձեռնարկատիրական ոլորտում, այդ թվում՝ հատկապես փոքր եւ միջին բիզնեսում արդյունավետ աշխատելու պայմանների բարելավման, երկրում բնակչության վճարունակ պահանջարկի բարձրացման անհրաժեշտությամբ:

ՀՀ-ում 2013 թվականի առաջին կիսամյակի գնաճի ծավալում դեռեւս իր ազդեցությունը չունեն գազի եւ էլեկտրաէներգիայի սակագների վերջին թանկացումները, որի համաձայն ըստ պաշտոնական տեղեկատվության դրա հետեւանքներով պայմանավորված հավելյալ գնաճը կկազմի առնվազն 2.7 %, իսկ մեր հաշվարկներով՝ 4-4.5 %:

Նվազագույն աշխատավարձի շեմի կտրուկ բարձրացումը, այն է 75.000 ՀՀ դրամ, արմատական, նաեւ արդյունավետ միջոց է խթանելու ներքին սպառողական պահանջարկը, լուծելու մի կողմից՝ մեր համաքաղաքացիների արժանապատիվ կենսապահովման խնդիրը, մյուս կողմից՝ ապահովելու լրացուցիչ դրամական միջոցներ բնակչության համար: Դրա արդյունքում էապես կմեղմվի սոցիալական լարվածությունը, հարաբերականորեն կավելանան կոմունալ ծառայությունների, սննդամթերքի եւ այլ ապրանքների շուկաներում իրացման ծավալները, քանի որ ՀՀ-ում բնակչության սպառման սահմանային գործակիցը բավականին մեծ է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ ՀՀ կառավարությունն իր հնգամյա ծրագրում նախատեսել է տարեկան առնվազն 5-7% տնտեսական աճ, ապա նվազագույն աշխատավարձի ներկայացվող փոփոխությունը համահունչ է նաեւ ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարին: Չէ՞ որ ՀՆԱ-ի յուրաքանչյուր տոկոսի աճն աշխատավարձի, այդ թվում՝ առավելապես՝ նվազագույն աշխատավարձի մակարդակի հետ ունի որոշակի սահունություն:

Ներկայացվող օրենսդրական նախաձեռնությունը հաշվի է առնում նաեւ այն, որ ՀՀ-ում, ըստ ԱՎԾ 2013 թվականի առաջին կիսամյակի տվյալների, միջին աշխատավարձը կազմում է 144.000 ՀՀ դրամ, մասնավոր հատվածում՝ 180.000 ՀՀ դրամ, իսկ նվազագույն սպառողական զամբյուղի մակարդակն էլ ավելի է բարձրացել:

Այսպիսով, նվազագույն ամսական աշխատավարձի աճի եւ միջին ամսական աշխատավարձի աճի մակարդակները պետք է տրամաբանորեն միմյանց հետ համահունչ լինեն: